ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2013 թվականի N 139-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 18 «Ն» որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի պահանջներով, **ո ր ո շ ու մ եմ.**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի հետևյալ կազմը.

Ասլանյան Սահակ	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ
Բարսեղյան Կարեն	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ
Հովհաննիսյան Անահիտ	Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ
Կոստանդյան Մուշեղ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
Հովսեփյան Կարինե	<<Կապանի թիվ 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն
Ստեփանյան Զավեն	<<Կապանի թիվ 13 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն

2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Սահակ Ասլանյանին, ատեստավորման հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Բարսեղյանին:

3.Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ հանձնաժողովի գործունեությունն իրականացնելու համար:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 24
ք. Կապան